մը մէջ դրած՝ վէզիրին ձեռքը կուտար . վէզիրը ըէիս էֆէնտիին կը յանձնէր, անիկայ ալ ծանր ծանր քալելով, չաւուշպաշըին՝ թէշրիֆաթճիին ու միւժտէճի պաշըին ետեւէն կ՚երթար թագաւորին աթոռին կը մօտենար ։ Ներքինապետը աթոռին դռնէն կ՚առնէր թուղթը՝ թագաւորին կուտար . անիկայ ալ վեր ՚ի վերոյ աչքէ անցընելէն ետեւ նորէն ներքինապետին ձեռքովը ըէիս էֆէնտիին կը յանձնէր որ թագաւորական դիւանը պահուի ։ Այն ատենը մուշտակ կը հագցընէին ներքինապետին՝ թագաւորին առջեւը . ներքինապետն ալ մէյմէկ խիլայ հագցընել կուտար ըէիս էֆէնտիին, իրեք իշխաններուն ու իրեք երգիչներուն . ետքը համառօտ աղօթք մը կ՚ընէին ու հանդէսը կը լմըննար ։

Այս տօնը ուրիշ թագաւորական մզկիթներու մէջ ալ կը կատարուի, բայց հանդէսը այնչափ փառաւոր չըլլար ։

Մէվլուտը ամէն տարի ըէպիւլ էվվէլ ամսուն 12ին կուգայ . ուստի մարտի 8ին ընկած էր աս տարի ։ Իսկ մեր աս տարուան օրացուցին մէջ մարտի 8էն զատ՝ սեպտեմբերի 30ին ալ Մէվլուտ դրուիլը՝ տպագրութե սխալ է ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՓ ՅԱՓՈՅ

ՅՈՐՍԻԿՆ ԻՄ ՎԵՐԱՑԵԱԼ [1]

Ո՜հ յիշատակ, յոյր ազդել
Խաղան սուսերք ընդ աղիս,
Եւ մինչ մեկնի՝ կլորի թել
Յուսաղնունդ սրտեկիս ։
Խուն դէպք երկայն ՚ի զգացուած
Ի վայրկենի ՚նդ իս անցին .
Ճար և ճարակ չըմնաց
Իմաստասէր իմ անձին .
Զոգենըկար զիմ փետուրս
Առեալ մըխեմ սիրտ ՚ի խորս,
Զարիւնս մեռեալ տալ ՚ի դուրս
Զոր եդ ոսփկն իմ անորս ։
Ես նըստէի ՚ի դահլիճ
Ի խորհրդոց սահեալ լիճ,
Եւ կամենայց զինն շուրջ
Պարն յաւելոյր իմաստ լուրջ,
Եւ ես յածեալ խորասոյզ
Մինչ ըզմըտաց քամեալ հոյզ
Թուէի հանել ընդ հորմոս
Զինջ մարգարիտ ցօղահոս . . .
Սիրտ իմ թընդայ . . . յանկասկած
Ընդ լուսամուտն ՚ի կողաց
Ձայնիկ լըսայ սըրտասէր,
Ծաւիւն ծաւիւն ինձ ասէր ։
Ըզմուսայից թողեալ դաս
Եւ թօթափեալ զԱթենաս,
Յարեայ ճապուկ յոտն ՚ի մատն
Ըզշունչ գելեալ անընդհատ
Ի սըրտատրոփ յիմ ՚ի լանջ,
Լեալ ակն ողջոյն և ականջ .
Վարագուրին ընդ բացուած
Տեսի զքեզ, տե՜ս անմոռաց . . .
Պատըշգամացն անդ ՚ի ծայր
Կացեալ զծաւիւնս որոճայր
Ամենևին նազենիկ
Ի գոյնն ՚ի տես գեղձանիկ .
Վառեալ կօշկօք ծիրանի,
Բըբուկն ՚ի նիւս ծածանի,
Եւ ոսկեգոյն պատմուճան
Յարփուոյն ՚ի շող ՚ի ճաճանչ,
Եւ թիկնամէջքն ընդ խոնարհ
Շուշանափայլ ճանապարհ
Ճերմակ փետրոց իջանէր,
Մինչ ՚ի գաւակ ժամանէր .
Իսկ այն բըբերն ոպնիազ
Քան զարևակն աննիազ
Որ տայլն փայլ ըզփայլն՝
Հրաշից ինձ վեհ հայելի .
Զի՜ վըճիտք զի՜ փոքըրկունք
Թըխատեսիլ նոր ատաղունք ։
Զինչ յիս բաղձումն այլ մընայր,
Բայց վայելել յայն յամայր .
Երջանկութեան անձնատուր
Բաղումք դարձան լոկ թափուր,
Թերևս մըթար մօտալուտ
Ձըգէ զբաղդին ամպ բալուտ .
Այլ խորհրդոց զինչ ինձ պէտ,
Հաւորս եղէ, չեմ պըւէտ ։
Հա՜պա ՚ի գործ լեր Համբոյժ,
Մատիր յուշիկ և ըզգոյշ,
Թեթև ընդ սեամըն սահեալ,
Զի կայ հեռի՚քէն մի քայլ . . .
Կա՛ց կա՛ց, կարճեա՛ զձեռդ ՚ի քեզ .
Մի՛ խըրտնուցուս հաւիկդ հեզ .
Տե՜ս զի դողով առ քեզ գամ,
Վստահ լեր յիս, չեմ կարկամ .
Ահա քան զաչսդ երբերուն
Սիրտ իմ ՚ի քեզ, հաւ սիրուն .
Ե՛կ գեղձանիկ, ե՛կ յիմ ձեռս . . .
Բա՜բէ, եթող զայն դերևս .
Եթող ըզձեռս և թըռեաւ,

---

1 Ի 22 աւուր ամսեանն յուլիսի գայ յանկարծ ՚ի պատուհան քերթողին գեղձանիկ թռչուն (քանարէն), ՚ի վանդակէ ուստեք անշուշտ զերծեալ . և ՚ի դերևս հանեալ զխնդութիւն նորա և զյոյս, ազդէ նմա անդէն զողբս զայս ։

Այլ չասէր՝ կաց դու բարեաւ․
Նա հուպ մատչել մանաւանդ
Թռչէր Թեւալ աստ և անդ՝
Մինչ ընդ քրւաւ խոյակին
Իջեալ նըստէր լուսամուտին,
Ընդ երկփեղկիւ փեղոսկրեայն
Ջծաւիւնն հընչէր լռելեայն․
Պարանոցիկն ընդ չըքնաղ
Ուռուցեալ երգ և ծիծաղ․
Եւ հանդարտիկ անմըռունչ
Կայր դադարէր 'ի մի քունջ։
Արդ ասեմ, ժամ է Համբոյժ․
Թաշկինակաւս իմ հանգուչ
Մատչիմ մատամբք 'ի յերեր,
Յոյս, մի յամօթ զիս առներ։
Ո՞հ, թ'էր ոք անդ զիս դիտել,
Զաշխարհ 'ի վարմն ոսկեթել
Ասէր, Համբոյժն ըմբռնէ․
Այնքան տենչ կիրթ զայր առնէ։
Իսկ աստ . . . աւա՜ղ զիս աւա՜ղ․
Յոյս իմ մընաց անսըւաղ․
Զվարմն ածի քաջ իսկ ճարտար,
Խիղճ իմ թողու զիս արդար․
Բայց ագգ հաւուց չարաճճիք
Որսորդախաղք են, ճար չէք․
Քան զամէն ջանս իմ հարուստ
Ժիր նա գըտաւ 'ի փախուստ․
Ես մինչ յափիկս որոնեմ
Նա զգագաթամբս օդաճեմ
Տայ թև թեթև 'ի թըռիչ
Եւ հեղ ծաւիւն մ'ի քըաքիջ․
Եւ զյոյս իմ յօդ սին հանել
Անկաւ 'ի բանտ սիրտս անել։
Պատըշգամին առ 'ի չեղ
Խոտորեցաւ 'ի գեղգեղ,
Ազատ ըղնոյն գեղգեղէ
Մինչ ես որսոյս ոբս եղէ,
Զհետ յիմարեալ հաշմ որսորդ
Հատկըլեալ շունչ 'ի սոսորդ
Վարկպարազի շուրջ բոլոր
Շրջիմ ադէքս 'ի յոլոր,
Խընդրեմ զձայնիկն այն 'ի զուր,
Զոսկեղէնիկն ըզփետուր։
Ծաւի՛ւն ծաւի՛ւն դըռընչէ
Յունկն իմ, այլ յոյս ոչ հընչէ։
Թաշկինակաւ սուտ ցանցոյս
Կալեալ զաչացս արտասուս,
Նըստիմ 'ի վայր գլխակոր
Իբրու զրեկեալ մի սափոր
Յայն ինչ հանել զջուր անձուկ
Որ ոչ բուժեաց ըզպապուք։
Այլ մինչ ցաւոց եմ դերի
Տակաւին սիրտս իմ բերի
Ուր բերան իղձք անժաման․
Կարծեմ թէ գայ թըռչունն այն։
Թէ տայ ճընճղուկ ճըռուողիւն,
Ասեմ, Ահա՛ իմ ծաւիւն․
Ճանճիկ բըզզէ յապիկին,
Ասեմ, Զայնիկ դեղձանին․
Յառնեմ ընդոստ, և ընդ օդ
Թըռչնոյս լինիմ հետազօտ․
Մինչև յաթոռ զոր լքի
Դառնամ սուգ դառն 'ի յոգի։
Ի գիւր սրտիս աղեկեզ
Ու'ի գեղ ըղձիս կանխատես
Հեղի զդէպ սեաւ սոփեստիս
Ձեզ որ լըսողք էք խրատիս․
Մի ձըգէք ձեռս 'ի թըռչուն
Որ 'ի յերկինս դիտէ զչուն․
Մի յամենայն 'ի վայելս
Զըգտել կամ մօտ մատչել եւս․
Եւ մի 'ստ ըղձից հակամէտ
Յանձեռընհաան իշխել դէտ։
Յանակընկալ բարւոյ տենչ
Զըւառ գործին շատք 'ի ձէնջ․
Դեղ դեղձանկիս ձեզ 'ի փորձ,
Մի կըրկնեսցէ ոք զիմ գործ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Լաւ բժիշկ ընտրելու վրայ։

Լաւ բժիշկ ընտրելու համար շատ փորձ ու հասկըցողութիւն պէտք է։ Պէտք չէ մէկ բժիշկը մէկալէն վեր դնել՝ միայն անոր երիտասարդութեանը կամ միայն ծերութեանը համար․ փորձառութիւնը շատ անգամ հասակին տեղը կը լեցընէ։ Դարձեալ ինչպէս որ պէտք չէ բարքը գէշ ու թեթևամիտ բժիշկ մը ընտրել, նոյնպէս պէտք չէ ան պատճառաւ ընտրել, որ սիրելի է ամենուն, քաղցր ու ճանչւոր է։ Շատ խելացի ու խորունկ թափանցող բժիշկներ ալ կան․ բայց աս իրենց մտաւորական կարողութիւնները բանի չեն գար, երբոր եռևէ չըլլան իրենց արհեստին մէջ կատարեալ հըմուտ ու փորձ ըլլալու։

Ուրեմն ան բժիշկը պէտք է ընտրել որ զուրիշը իրեն վրայ կը վստահացընէ․ վասն զի հիւանդութեան գլխաւոր դեղերէն մէկը աս վստահութիւն է։ Նշանական է որ մէկը վստահ չըլլար ան բժշկին վրայ որ հիւանդին երակը կը շօշափէ առանց ուշադրութեան, ու խելքը միտքը ուրիշ բաներու տալով․ որ շուտով ու անհոգութեամբ երակը շօշափելէն ետև այնպիսի գուշակութիւններ կ'ընէ, որ հակառակ կ'ելլէն հիւանդութեանը, կամ թէ դեղերուն նուսխան շուտ մը կը գրէ՝ նաև առանց նախ հիւանդը քննելու։